# Ծուշանիկ Կուրղինյան

## Դոնի վրա

Նվեր Ն-ին

Խաղա՛ղ է . . . թռվիչ . . . նավակն է լողում
Ջրի երեսին:
Թիերից փախչող կոհակը դողում
Ջեփյուռի ուսին . . .
Նիրհում է Դոնը . . . քնած են դալար,
Սիզավետ ափեր .
Բոսյակն է երգում տխուր միալար
Որ՝ «շատ է արբեր» . . .
Ես վախենում եմ . . . առաջին անգամ
Նավակ եմ նստել .
Անհայտ երկյուղից սաստիկ կդողամ
Կուզեմ արտասվել . . .
Սակայն իմ դիմաց զգվող ժպիտով
Ափն է երևում .
Նրան եմ ձգտում անզուսպ փափագով
Եվ սրտապնդվում:
Այլանդակ տիպար . . . ես ինձ զզվանքով
Ասում եմ լռիկ,
Թիերը խլում և հոխորտանքով
Պատառում ալիք . . .
Ափ եմ դուրս գալիս . . . թվում եմ ես ինձ
Չնչին, փոքրոգի

Դեմքիս է նայում ծեր Դոնը հեռվից
Ծաղրում անհոգի . . .

1907 թ .